ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ՀՄԱԾՁԲ-20/14

ք. Երևան

«30» հունիս 2020

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարիչ Վահան Պապիկյանի, որը գործու աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արթուր Էֆեն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գովազդային արշավի հ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սո պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանվ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկակ բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագի գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությու պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջ Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետ նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համա վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիր Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներ սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխա մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերու այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակ գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատու կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետո նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայությա մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսվա տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5 228 400 (հինգ միլիոն երկու հարյուր քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Վարդանանց 18-6
Կառավարական տուն 1	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1660004224190100
Հ/Հ 900011022085	ՀՎՀՀ 02615612
ՀՎՀՀ 02505554	
.....	.....
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 1
«30» հունիսի 2020թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱԾՁԲ-20/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79341130/2	**Գովազդային արշավի հետ կապված ծառայություններ** «ԿՐԻՐ ԴԻՄԱԿ ՓՐԿԻՐ ԿՅԱՆՔԵՐ» խորագրով Համաձայն հավելված 1.1-ի: Ծառայությունն իր մեջ ներառում է. • պաստառների ձևավորում և ադապտացում համապատասխան չափերի համար, • պաստառների տպագրություն, Scroller paper 180գր, UV printing 1440 dpi, չափսերը համապատասխան հավելված 1.1-ի : • Տպագրություն՝ 1080dpi Նյութ (ներկ)՝ Eco solvent • տեղադրում, ապամոնտաժում և տեղափոխում: • գովազդային վահանակների տրամադրում:	դրամ	5 228 400	1	Համաձայն հավելված 1.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օր:

**** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:***
***** Տպագրվող նյութերը տրամադրվում է Պատվիրատուի կողմից:***
****** Գովազդային պաստառները վահանակների վրա պետք է ցուցադրված լինեն առնվազն մեկ ամիս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18-6
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004224190100
ՀՎՀՀ 02615612

Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 1.1
«30» հունիսի 2020թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱԾՁԲ-20/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Երևան քաղաքում տեղադրվող գովազդային վահանակների

Հ/Հ	Հասցե	քանակ		Չափս (ք.մ.)
		վահանակ	պաստառ	
1.	**Սքրոլլերներ /երկկողմանի AB**			
1	Աբովյան 31	3	6	1.20 x 2.22
2	Մոսկովյան-Աբովյան/Պուշկին դպրոցի մոտ	3	6	1.20 x 1.80
3	Մոսկովյան 33-Բաղրամյան խաչմերուկ	2	4	1.20 x 1.80
4	Սայաթ-Նովա պող./ֆրանսիական հր. մոտ	6	12	1.20 x 1.80
5	Մաշտոց 43-Իսահակյան խաչմերուկ	2	4	1.20 x 2.22
6	Նալբանդյան փող.	7	14	1.20 x 2.22
7	Խանջյան-Սայաթ-նովա խաչմերուկ	1	2	1.20 x 2.22
8	Կոմիտաս-Գյուլբենկյան խաչմերուկ	1	2	1.20 x 2.20
9	Կոմիտաս-Փափազյան խաչմերուկ	1	2	1.20 x 2.20
10	Կոմիտաս-Տիգրանյան խաչմերուկ / աջից	1	2	1.20 x 2.20
11	Կոմիտաս-Տիգրանյան խաչմերուկ / ձախից	1	2	1.20 x 2.20
2.	**Սքրոլլերներ կանգառասրահներում /երկկողմանի AB**			
1	Մաշտոցի 5	1	2	1.02 x 1.81
2	Մաշտոցի 10	1	2	1.02 x 1.81
3	Մաշտոցի 15	1	2	1.02 x 1.81
4	Մաշտոցի 20	1	2	1.02 x 1.81
5	Մաշտոցի 29	1	2	1.02 x 1.81
6	Մաշտոցի 42	1	2	1.02 x 1.81
7	Մաշտոցի պող. / Կոնսերվատորիայի դիմաց	1	2	1.02 x 1.81
8	Մաշտոցի պող. / Կոնսերվատորիայի դիմացի մայթ	1	2	1.02 x 1.81
9	Բաղրամյան պող. / Սարյանի այգու դիմաց	1	2	1.02 x 1.81
10	Բաղրամյան պող. / Սանտա Ֆե սրճ. դիմաց	1	2	1.02 x 1.81
11	Սայաթ-Նովա պող. / կենտրոն թաղապետ. դիմաց	1	2	1.02 x 1.81
12	Ամիրյան փող. / Beeline-ի դիմաց	1	2	1.02 x 1.81
13	Բաղրամյան-Պռոշյան խաչմերուկի մոտ	1	2	1.02 x 1.81
14	Աբովյան-Իսահակյան խաչմերուկի մոտ	1	2	1.02 x 1.81
15	Խանջյան փող. / Վերնիսաժի դիմաց	1	2	1.02 x 1.81
3.	**Ստանդարտ կանգառասրահներ / երկկողմանի գովազդատուփ - AB**			
1	Աբովյան 27 շենքի մոտ (ASHB-ի մոտ)	1	2	1.10 x 1.60
2	Աբովյան փող. / Ազգարարային համալսարանից ներքև, այգու մոտ	1	2	1.10 x 1.60
3	Կորյուն փող. / Բժշկական համալսարանի մոտ	1	2	1.10 x 1.60
4	Տ.Մեծ պող. / Գ.Լուսավորչի եկեղեցու դիմաց	1	2	1.10 x 1.60
5	Կիևյան 1 շենքի մոտ (SAS supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
6	Կոմիտասի 12 շենքի մոտ (Ameria bank-ի հարևանությամբ, Գյուլբենկյան խաչմերուկ)	1	2	1.10 x 1.60
7	Կոմիտասի 54 շենքի մոտ (SAS supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60

8	Կոմիտասի պող. / Արաբկիր շուկայի հանդիպակած մայթ	1	2	1.10 x 1.60
9	Ազատության 1 շենքի մոտ (Բաբայան խաչմերուկ)	1	2	1.10 x 1.60
10	Ազատության 25 շենքի մոտ (Grand Candy-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
11	Քոչանի 1 շենքի մոտ (Բարեկամության հրապարակ/մետրոյի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
12	Բաղրամյան փող. / Կամոի անվան դպրոցի հանդիպակած մայթ	1	2	1.10 x 1.60
13	Սեբաստիա-Տիչինայի խաչմերուկ	1	2	1.10 x 1.60
14	Սեբաստիա փող. / Մալաթիա-Սեբաստիա թաղապետարանի հարևանութայմբ	1	2	1.10 x 1.60
15	Օհանովի փող. (Yerevan City supermarket-ի հանդիպակած մայթ)	1	2	1.10 x 1.60
16	Ռաֆֆու 85 շենքի դիմաց (Եկեղեցու հանդիպակած մայթ)	1	2	1.10 x 1.60
17	Սեբաստիա-Լենինգրադյան-Սարգսյան խաչմերուկ (այգու մայթ)	1	2	1.10 x 1.60
18	Հալաբյան փող. / Թումոյի այգու մոտ (Կինյան կամրջի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
19	հ. 53 շենքի մոտ ("1+1" խանութի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
20	Մարգարյան 53 շենքի մոտ (Ֆուչիկի խաչմերուկ)	1	2	1.10 x 1.60
21	Շիրազի 20 շենքի մոտ (Yerevan City supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
22	Լենինգրադյան 42 շենքի մոտ (Blits բ/լ-ի հանդիպակած մայթ)	1	2	1.10 x 1.60
23	Շինարարների 15 շենքի մոտ (Tsirani supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
24	Դ. Անհաղթի 11 շենքի դիմաց (թաղապետարանի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
25	Ռուբինյաց-Պ.Սևակի խաչմեւոկ (Yerevan City supermarket-ի հանդիպակած մայթ)	1	2	1.10 x 1.60
26	Գայի պող. սկզբնամասում (ստորգետնյա անցումի մոտ, ներքևից աջ կողմում)	1	2	1.10 x 1.60
27	Գայի արձանի հանդիպակած մայթին (Converse bank-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
28	Տ,Մեծի 50 շենքի դիմաց (VTB բանկի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
29	Էրեբունի փող. (Yerevan City supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
30	Դ.Սասունցի պող. / Թաղապետարանի հարևանությամբ	1	2	1.10 x 1.60
31	Գ.Նժդեյի փող. / Հայրենիք հանրախանութի (նախկին շուկա) հանդիպակած մայթ	1	2	1.10 x 1.60
32	Բագրատունյաց փող. (Yerevan City supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
33	Արշակունյաց 26 շենքի դիմաց (Փետակի խաչմերուկ)	1	2	1.10 x 1.60
34	Արտաշիսյան 42 շենքի դիմաց-Բագրատունյաց խ-ուկ (Yerevan City supermarket-ի հարևան-մբ)	1	2	1.10 x 1.60
35	Տ,Պետրոսյան 48 շենքի դիմաց (Yerevan City supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60
36	Սասնա Ծռերի փող. (Եկեղեցու դիմաց)	1	2	1.10 x 1.60
37	Աճառյան 32 շենքի դիմաց (Natali Farm դեղատան մոտ)	1	2	1.10 x 1.60
38	Բաբաջանյան փող. / Նարեկացի թաղամաս (Nor Zovq supermarket-ի հարևանությամբ)	1	2	1.10 x 1.60

39	9-րդ փող. / Նուբարաշենի կենտրոնական այգու հանդիպակած մայթին	1	2	1.10 x 1.60
40	Հովսեփյան փող. / Հ1 հեռուստաընկերության հանդիպակած մայթ	1	2	1.10 x 1.60

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

.....
Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18-6
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004224190100
ՀՎՀՀ 02615612

.....
Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 2
«30» հունիսի 2020թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱԾՁԲ-20/14 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79341130/2	Գովազդային արշավի հետ կապված ծառայություններ	-	-	-	-	-	-	5 228 400	5 228 400	5 228 400	5 228 400	5 228 400	5 228 400	5 228 400

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

.....
Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18-6
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004224190100
ՀՎՀՀ 02615612

.....
Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված 3
«30» հունիսի 2020թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱԾՁԲ-20/14 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 30 » հունիսի 2020թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱԾՁԲ-20/14 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն